ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 23/11

Քաղ. Երեւան **23 մարտի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ.Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. մատի 23-ի նիստում (արձանագրություն N3/14) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի կողմից 2011թ. փետրվարի 21-ին «МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը:

Դիմումումին կից ներկայացված են տեղեկություններ «МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ» ապրանքային նշանի օգտագործման և գովազդի մասին տեղեկություններ, ինչպես նաև «МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ» ապրանքային նշանով մակնշված ապրանքի իրացման ցանցի մասին:

Կոլեգիայի քննարկման արդյունքների ներկայացման ժամանակ նշվեց, որ դիմողի կողմից ներկայացվել են մի շարք փաստարկներ հիշյալ ապրանքային նշանների հանրահայտության ճանաչման մասին, նշվեց նաև, որ 31.12.2007 թվականից «МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ» ապրանքային նշանով մակնշված 265564 կգ քանակով կոնֆետներ են իրացվել սպառման շուկայում (ք.Երևանի շուրջ 2400 խանութներում և մարզերի 4000 խանութներում), որը վկայում է նշված ապրանքային նշանի հանրահայտ լինելու մասին: Նշվեց նաև, որ վերը նշված ապրանքային նշանը գովազդվել է տարբեր հեռուստաընկերությունների կողմից բավականաչափ

եթերաժամով, ինչը նույնպես խոսում է հանրության լայն շրջանակում դրա հայտնի լինելու հնարավորության մասին:

Ներկայացված փաստարկները համոզիչ էին բողոքարկման խորհրդի համար, քանի որ հիշյալ ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության լայն շրջանակների համար կոնֆետներ ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածիով ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման «Կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետով և «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի դրույթներով

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ ՍՊԸ-ի 2011թ. փետրվարի 21-ի դիմումը եւ «МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ» բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱԾՄԴ 30-րդ դասի «կոնֆետներ» ապրանքների համար:

1.	Որոշման կայացման թվականը	23.03.2011
2.	Հանրահայտ ապրանքային նշանի գրանցման համարը	39
3.	Հանրահայտ ապրանքային նշանի անունը	«МИШКА КОСОЛАПЫЙ ԾՈՒՌԹԱԹ ԱՐՋՈՒԿ»
4.	Թվականը, որից սկսված ապրան-քային նշանը հանրահայտ է ճանաչ-վում ՀՀ-ում	2007
5.	Հանրահայտ ապրանքային նշանի	«Գրանդ Քենդի» Հայ-կանադական Հ/Ձ

սեփականատիրոջ անվանումը եւ գտնվելու վայրը հասցեն	ՍՊԸ 0061 ք. Երևան, Մասիսի փ.31
6. Ապրանքների եւ ծառայությունների Միջազգային դասակարգման դասերին համապատասխան խմբավորված այն ապրանքների եւ ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ ապրանքային նշանը ճանաչվել է հանրահայտ	ԱԾՄԴ 30-րդ դասի «կոնֆետներ» ապրանքների համար

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան